N: 17/A151
«10» 06 2022

«Արփա-Սևան» ԲԲԸ

Էական փաստերը և տեղեկությունները ներառող փաստաթուղթ

թիվ 15, 10 հունիսի 2022թ.

Բաժնետերերի ընդհանուր ժողովի հրավիրման վերաբերյալ.

2022թ. հունիսի 8-ին տեղի ունեցավ «Արփա-Սևան» ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովը:

Ընկերության թվով 20452 բաժնետոմս ունեցող անդամներից ընդհանուր ժողովին մասնակցում էին թվով 15191 բաժնետոմս ունեցող անդամներ /բաժնետերեր, որոնց պատկանում է բաժանորդագրված բաժնետոմսերի 74,28 տոկոսը/:

«Արփա-Սևան» ԲԲԸ Ընդհանուր ժողովի կողմից ընդունված էական փաստեր և տեղեկություններ ներառող որոշումները՝

1.Շահութաբաժինների վճարման վերաբերյալ.

Ընկերության 2021թ. 111 035 000 (հարյուր տասնմեկ միլիոն երեսունհինգ հազար) ՀՀ դրամ զուտ շահույթից՝

- 51 130 000 (հիսունմեկ միլիոն հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ օգտագործել շահութաբաժինների վճարման համար: Սահմանել, որ մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահութաբաժնի մեծությունը կազմում է 2 500 (երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:
- 59 905 000 (հիսունինը միլիոն ինը հարյուր հինգ հազար) ՀՀ դրամը կուտակել ընկերության կուտակված շահույթի ֆոնդում:

2.Կառավարման մարմինների անդամների փոփոխության վերաբերյալ.

Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում դիտորդների խորհրդի կազմում ընտրվեցին՝

10% ավելի բաժնետոմսերի տիրապետող Ընկերության բաժնետերեր Պարույր Հակոբի Հակոբյանը և Կարինե Արշավիրի Նավասարդյանը ընդգրկվեցին խորհրդի կազմում առանց ընտրության:

Բաժնետերերի ընդհանուր ժողովում դիտորդների խորհրդի կազմում ընտրվեցին չորս խորհրդի անդամներ, որից երկուսը՝ Պողոսյան Գոռ Միհերի և Առաքելյան Մարտին Հրաչյայի անկախ անդամներ են:

Խորհրդի անդամների վերաբերյալ տվյալները ներկայացված են ներքոհիշյալ աղյուսակում.

h/h	Խորհրդի անդամներ	Զբաղեցրած պաշտոնը	Բաժնե-տոմսերի քանակը	Այլ ընկերությունում զբաղեցրած պաշտոնները
1	Հակոբյան Պարույր Հակոբի	Գլխ. տնօրեն	11410	«Մեղմ զեփյուռ» և «Ջրասահք» ՍՊԸ-ների տնօրեն, «Արփա-Սևան» Բարեգործական Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ
2	Նավասարդյան Կարինե Արշավիրի	-	2673	
3	Հակոբյան Ռաֆայել Արմենի		0	«Նուռլոջիք» ՍՊԸ և «Ա-Ս Էներջի» ՍՊԸ տնօրեն
4	Վարդանյան Զորիկ Հովհաննեսի	ՊՏԲ ղեկավար	34	«Արփա-Սևան» Բարեգործական Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
5	Պողոսյան Գոռ Միհերի	-	0	«Այոթեք» ՍՊԸ, մասնագետ
6	Առաքելյան Մարտին Հրաչյայի	-	0	«Միքսել» ՍՊԸ գործադիր տնօրեն, «Նավասարդ Շինարար» ՍՊԸ փոխտնօրեն

Գլխավոր տնօրեն՝ Պարույր Հակոբյան

կատարող Զ.Վարդանյան հեռ. (012) 21-11-11 (138)